



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 5-Ա

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՄԱԿԱՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ, ԺԵՆՅԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ, ՍԱԹԵՆԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ, ԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ, ՀԱՅԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ, ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՀԱԿՈՒՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆԱՐԵԿ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻՆ ԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը, Հանրապետության նախագահի 2023 թվականի հունվարի 30-ի թիվ ՆՀ-34-Ա, թիվ ՆՀ-35-Ա, թիվ ՆՀ-36-Ա, թիվ ՆՀ-37-Ա, թիվ ՆՀ-38-Ա, թիվ ՆՀ-39-Ա, թիվ ՆՀ-40-Ա, թիվ ՆՀ-41-Ա, թիվ ՆՀ-42-Ա և թիվ ՆՀ-43-Ա հրամանագրերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի 8-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ ԲԴԽ-13-Ո-22 որոշման 3-րդ հավելվածի 1-ին կետով և 2-րդ կետի «ա» ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ Մակար Կիրակոսյանին, Ժենյա Մելիքսեթյանին, Սաթենիկ Անդրեասյանին, Անի Մարտիրոսյանին, Հայկ Իսրայելյանին, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հակոբ Մանուկյանին, Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի

դատավոր Արտակ Կարապետյանին, Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նարեկ Բադալյանին, Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արշակ Հարությունյանին և Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Անդրանիկ Մնացականյանին տրամադրել իրենց անվամբ կնիքներ:

Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

**2023թ. հունվարի 31
ք. Երևան**